# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին *որոշում է.*

Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 14-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հալիձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունները քննարկելու մասին:

2. 2018թ պետական բյուջեից Տաթև համայնքին նպատակային հատկացումներ ստանալու նպատակով մշակված ծախսային ծրագրերին հավանություն տալու մասին:
3.Համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ծախս կատարելու մասին:

4. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հարժիս եվ Շինուհայր բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունները քննարկելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 28-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱԼԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է***.

1. Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հալիձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի առաջարկվում է Տաթև համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից 1,0495 հեկտար, այդ թվում՝

1)Համայնքային սեփականություն հանդիսացող 1,000 հեկտար այլ հողատեսք (կադաստրային թաղամաս՝ 09-054-0156-ից) փոխադրել բնակավայրերի հողեր կատեգորիա՝ <<Հասարակական կառուցապատման>> գործառնական նշանակությամբ՝ հանգստի տաղավարների և գիշերակացի կացարանների կառուցման համար:
2)Համայնքային սեփականություն հանդիսացող 0.0495 հեկտար այլ հողատեսք (կադաստրային թաղամաս՝ 09-054-0156-ից) փոխադրել բնակավայրերի հողեր կատեգորիա՝ <<Հասարակական կառուցապատման>> գործառնական նշանակությամբ՝ տեղական մթերքների իրացման և արագ սննդի սպասարկման օբյեկտի կառուցման համար:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

7. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

9. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

10. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 29-Ա

2018Թ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇԱԿՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի, 4-րդ, 7-րդ, 9-րդ կետերով, 18-րդ հոդվածի 4-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 29.12.2016թ. № 1256-Ա ՀՀ 2018թ. բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշմամբ հաստատված՝ տեղական ինքնակառավարման մարմիններին պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ հատկացնելու կարգը, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքապետարանի կողմից մշակված համայնքի սոցիալական զարգացմանն ուղղված՝ <<Շինուհայրի նախադպրոցական հաստատության առաջին մասնաշենքի վերանորոգում>> ծրագիրը և 2018թ. բյուջետային ֆինանսավորման հայտը՝ համաձայն № 1 հավելվածի:
2. Բյուջետային ֆինանսավորման հայտերը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ գնահատման և պետական նպատակային հատկացումներ ստանալու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 30-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԾԱԽՍ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի դրույթներով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է***

1. Համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից/հոդված 4891/ հատկացնել՝

1) Հարժիսի Հ. Մինասյանի անվան միջնակարգ դպրոցին դրամաշնորհի տեսքով՝ 120000/մեկ հարյուր քսան հազար/ դրամ/Հ. Մինասյանի ծննդյան օրվա համար կազմակերպված միջոցառման նպատակով/:

2)Տաթև համայնքի սեփականությունն հանդիսացող գույքի վերագնահատման նպատակով 650000/վեց հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

3) Մայիսի 28-ի տոնակատարություններին միջոցառում-ճաշկերույթ կազմակերպելու նպատակով՝ 450000/չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 31-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԺԻՍ ԵՎ ՇԻՆՈՒՀԱՅՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է.***

1. Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հարժիս և Շինուհայր բնակավայրերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի առաջարկվում է Տաթև համայնքի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նշանակության հողերից 1,2375 հեկտար, այդ թվում՝

1) համայնքային սեփականություն հանդիսացող 0.0450 հեկտար (2 միավոր) արոտավայր (կադաստրային թաղամասեր՝ 09-056-0101-ից, 09-056-0103-ից).

2) պետական սեփականություն հանդիսացող 1.1925 հեկտար (53) միավոր, որից 0.0225 հեկտար վարելահող (կադ. թաղամաս՝ 09-056-0043-ից), 1.0575 հեկտար արոտավայր (կադ. թաղամաս՝ 09-056-0043-ից 26 միավոր, 09-056-0051-ից 2 միավոր, 09-056-0053-ից, 09-073-0044-ից 14 միավոր, 09-073-0055-ից 4 միավոր) և 0.1125 հեկտար այլ հողատեսք (կադ. թաղամաս՝ 09-073-0044-ից 5 միավոր).

փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<էներգետիկայի օբյեկտների հողեր>> գործառնական նշանակությամբ՝ հողմային էլեկտրակայանի շինարարության համար:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ
2. ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ
4. ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ
5. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ
6. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
7. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ
9. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ
10. ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ**